ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՏԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԸ ՈՐՊԵՍ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔ

ԵՐԱՆՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Թանգարանային թեմատիկ յուրաքանչյուր ցուցադրության ստեղծումն ու կազմակերպումն յուրօրինակ գիտահետազոտական մի աշխատանք է, որի իրականացումը համարվում է թանգարանի գործունեության հիմքը:

Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրությունների կազմակերպման աշխատանքներն իրենց բովանդակությամբ չեն տարբերվում թանգարանային այլ թեմատիկ ցուցադրությունների ստեղծման աշխատանքներից: Այդուհանդերձ՝ այդ թեմայով թանգարանային ցուցադրությունը նոր երևույթ է հայ թանգարանագիտության բնագավառում, և ըստ այդմ՝ դեռևս լայնորեն չի լուսաբանվել թանգարանագիտական գրականության մեջ:

Հայոց ցեղասպանությանը նվիրված լիարժեք գիտական ցուցադրության առաջին փորձը կատարվեց 1995 թվականին, երբ Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման ընդհանուր ծրագրում նախատեսվեց ստեղծել նաև առանձին թանգարանային ցուցադրություն: Հայոց ցեղասպանության թանգարանի բացումը տեղի ունեցավ 1995 թվականի Ապրիլի 24-ին: Գիտական ցուցադրության հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը, որը ճարտարապետների մի խմբի համագործակցությամբ ստեղծեց ներկայիս գործող ցուցադրության հիմքը՝ պարբերաբար այն կատարելագործելով և համալրելով նոր նյութերով:

Ստեղծված գիտական ցուցադրության կազմակերպման մի քանի հարցերին նվիրված իր հոդվածում Լ. Բարսեղյանը փորձում է Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտական ցուցադրության կազմակերպմանը ներկայացվող մեթոդաբանական պահանջների վերլուծությամբ ընդհանրապես անդրադառնալ թանգարաններում գիտական ցուցադրությունների ստեղծման հիմնախնդիրներին:[1] Իրավացի է Լ. Բարսեղյանը, երբ գտնում է, որ թանգարանային ցուցադրական աշխատանքների կազմակերպման կարևորագույն հատկանիշներից է դինամիկան, երբ թանգարանային արժեքների հետ միասին ցուցադրական համալիրում բնօրինակ առարկաները լրացվում են ընդհանուր պատմական աղբյուրագիտության՝ ներկայումս առանձին բնագավառ կազմող *թանգարանային աղբյուրագիտական* նյութերով:

Թանգարանային գործի տեսությունը վկայում է, որ գիտական ցուցադրության կազմակերպումն իրականացվում է աշխատանքային տարբեր փուլերով: Աշխատանքների կազմակերպման սկզբնական փուլն էական նշանակություն ունի ցուցադրության կազմակերպման ողջ ընթացքի համար: Այդ փուլը կարևորվում է ցուցադրության ստեղծման հայեցակարգը մշակելու սկզբունքային մոտեցմամբ:

Թանգարանագիտության զարգացումն արդեն 20-րդ դարի 80-ական թվականների վերջում եկավ այն հստակ եզրահանգմանը, որ ընդհանուր պատմական-աղբյուրագիտական հետազոտությունների մեջ, որպես ինքնուրույն բնագավառ, առանձնանում է *թանգարանային աղբյուրագիտությունը*:[2] Ի տարբերություն պատմական այլ բնույթի սկզբնաղբյուրների, թանգարանային աղբյուրագիտության ուսումնասիրության օբյեկտը հանդիսանում է թանգարանային առարկան: Վերջինս, որը գիտահետազոտական աշխատանքի և ցուցադրության կազմակերպման ընթացքում հիմնականում պահպանության, պատմական հիշողության վերականգնման, պատմական փորձի ուսումնասիրման և մեկնաբանման միջոց է, նաև առանձնակի կարևորություն ունեցող աղբյուրագիտական միավոր է: Նշենք, որ թանգարանային աղբյուրագիտության ուսումնասիրության առարկա կարող են դառնալ ոչ միայն բացառիկ կամ տիպային բնօրինակ թանգարանային առարկաները, այլև ընդհանուր թեմայի բացահայտմանը ծառայող գիտաժանդակ տարբեր նյութեր, ինչպես օրինակ՝ մանրակերտները, կրկնօրինակները, վերարտադրված ու պատճենահանված նյութերը: Որպես աղբյուրագիտական նյութեր կարող են ծառայել նաև քարտեզները, հատակագծերը, սխեմաները, դիագրամաները և դիդակտիկ այլ նյութեր: Այսպիսով, թանգարանային աղբյուրներ ասելով պետք է պատկերացնել թանգարանային առարկաների և գիտաժանդակ նյութերի ամբողջությունը, որոնք կազմելով թանգարանային ֆոնդը՝ հավասարաչափ կերպով հանդիսանում են տեղեկատվության կրողներ:

Համոզված կարելի է ասել, որ թանգարանային և պատմական աղբյուրագիտության հիմնախնդիրների մեջ սկզբունքային տարբերություն գոյություն չունի:[3]

Թանգարանային աղբյուրագիտության առարկան, ինչպես և ընդհանրապես աղբյուրագիտության առարկան, իր մեջ ներառում է երկու բաղադրյալ՝ տեսական և գործնական:

Ծավալուն տեղեկատվություն պարունակող սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանք դասակարգել ըստ տեսակների ու բնույթի: Հարկ է զանազանել *զանգվածային սկզբնաղբյուրները*՝ հիմնականում իր ժամանակաշրջանը բնորոշող տեղեկատվական նյութեր, որոնց ընտրությունը համեմատական եղանակով հնարավորություն է ընձեռում ստույգ աղբյուրի հատկանիշներ հաղորդել թանգարանային առարկային: Այդ դեպքում սկզբնաղբյուր համարվող թանգարանային առարկան վերածվում է իրական վկայության և ըստ ամենայնի նպաստում է ցուցադրության հավաստիությանը:

Անշուշտ հարկ է շեշտադրել, որ պատմական աղբյուրները, հանդիսանալով հետազոտվող հասարակական-պատմական իրականության տեղեկատվության կրողներ, ուսումնասիրողի կողմից պետք է դիտվեն տեսական-մեթոդոլոգիական և ճշգրիտ գիտական հիմնախնդիրների լույսի ներքո:

Հանրահայտ է, որ աղբյուրագիտության մեջ առանձնակի տեղ են գրավում աղբյուրների դասակարգման հիրմնախնդիրը: Հանրահայտ է նաև, որ այդ խնդիրները լուծում են հետազոտողները՝ տարբեր աղբյուրների օգտագործման ժամանակ:

Արդեն իսկ հետազոտման ընթացքում ուսումնասիրողը պատմական աղբյուրները հստակ բաժանում է չորս կարգերի. *իրեղեն, գրավոր, կերպարվեստի* և *ժայնային*:[4]

Թանգարանային ցուցադրության կազմակերպման ժամանակ աղբյուրների դասակարգման ընթացքում առաջին պլան են մղվում տեսանելի, դիտվող թանգարանային առարկաներն ու արժեքները, որոնք, ըստ այդմ, հանդիսանում են տեղեկատվության հիմնական աղբյուրները:

Այդ տեղեկատվությունն իր մեջ պարունակում է պատմական տարբեր գործընթացների մասին տվյալներ, որոնք առանձնացվում են տարբեր խմբերի:

19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին քառորդի ժամանակահատվածում հայ իրականության մեջ պատմական աղբյուրների նոր տեսակներ են հայտնվում: Դրանք, առաջին հերթին, դիվանագիտական բնույթի փաստաթղթերն են, տեղի ունեցող իրադարձությունների մասին ականատեսների ու առանձին գործիչների հրապարակախոսական վկայություններն ու ելույթները, հիմնականում կապված՝ Օսմանյան Թուրքիայի վարած մարդատյաց քաղաքականության՝ կայսրության տարածքում բնակվող ոչ մահմեդական ժողովուրդներին իսպառ բնաջնջելու կամ բռնի դավանափոխության ենթարկվելու ծրագրի իրականացման հետ:

Ի մասնավորի՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող թանգարանային արժեքների աղբյուրագիտական վերլուծությունը հիմնականում նպատակ է հետապնդում աղբյուրի բովանդակության ուսումնասիրության միջոցով բացահայտել նրա բուն էությունը:

Թանգարանային աղբյուրագիտության 19-20-րդ դարերին պատկանող նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ ի թիվս պատմական աղբյուրների հիմնական տեսակների, Հայոց ցեղասպանության թեման առավել ընդգրկուն և համոզիչ ներկայացնելու համար կարևորվում են միջազգային իրավական, օրենսդրական աղբյուրները:

Պետք է խոստովանել, որ պատմական բնույթի թանգարանային ցուցադրություններում սովորաբար անտեսվում է պատմական երևույթների և պրոցեսների կառուցվածքային վերլուծությունը: Թանգարանային ցուցադրությունները ստեղծող մասնագետները հաճախ խուսափում են ցուցադրության մեջ ընդարձակ բովանդակություն պարունակող բացատրագրեր օգտագործելուց: Այնինչ Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրության մեջ, երբ խոսքը վերաբերում է թուրքական կառավարող շրջանների կողմից վարվող հայատյաց և հայաջինջ քաղաքականությանը, անհնար է ցուցադրությունը ներկայացնել, շրջանցելով այդ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում բնակվող հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի իրողությունը:

Այսօր, երբ Հայոց ցեղասպանության թանգարանի այցելուներն իրենք են պահանջում ճշմարտացի տեղեկություններ ստանալ և ծանոթանալ Արևմտյան Հայաստանի մասին պահպանված վկայություններին, անհրաժեշտություն է դառնում այդ նպատակով լայնորեն օգտագործել վիճակագրական տվյալներ ներկայացնող աղյուսակներ ու սխեմաներ: Ցուցա-

դրության մեջ վիճակագրական տվյալները ներկայացնող տախտակներին և վահանակներին, ցուցադրական սեղաններին տեղադրված նյութերը, բնօրինակ թանգարանային առարկաների կողքին ու նրանց հետ, ձեռք են բերում թանգարանային արժեքի նշանակություն:

Վիճակագրական փաստաթղթերը կամ նրանց հիման վրա ստեղծված տեղեկատվական նյութերն առավել բարդ տիպի պատմական աղբյուրներ են: Արժե հիշել անգլիացի նշանավոր քաղաքական գործիչ Դիզրայելի խոսքերը. «Գոյություն ունի մարդկանց խաբելու երեք ձև. խուսափող պատասխան, ուղղակի սուտ և վիճակագրություն»: Թանգարանային ցուցադրության ոչ մասնագետ այցելուի համար երեք տարբեր տեղեկատվությունն էլ կարող է ընկալվել որպես ճշմարտացի հաղորդագրություն: Այսօր էլ աճպարարությամբ զբաղվող մի խումբ թուրք և արևմտյան պատմաբաններ առաջնորդվում են հենց այս սկզբունքով: Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտելու նպատակով նրանք, վնասելով ցանկացած վիճակագրական հաշվարկ ու տվյալ, շրջանառության մեջ են դնում այդ կեղծ «տվյալները» և դրանք անվերջ կրկնելով, մատուցում որպես իրողություն:

Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության ստեղծման ժամանակ այցելուներին ներկայացվեցին ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ ողջ Օսմանյան Թուրքիայի տարածքում հայկական բնակավայրերի, եկեղեցիների, դպրոցների և հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրությունների հիման վրա կազմված մեծաղիր ցուցադրական վահանակներ: Այս սկզբունքով էլ առաջնորդվեցինք նաև մենք, երբ Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ հրատարակության պատրաստեցինք «XX դարի առաջին ցեղասպանությունը» հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ցուցահանդեսների կազմակերպման համար նյութերի՝ մեծադիր լուսանկարներից և բացատրագրերից բաղկացած ժողովածուն:[5]

Անշուշտ՝ Հայոց ցեղասպանության թանգարանի ներկայիս գիտական ցուցադրության մեջ ներկայացվող տեղեկատվական նյութերի օգտագործման միջոցները դեռևս թերի են: Սա, առաջին հերթին, ցուցադրական սահմանափակ տարածքի հետևանք է (թանգարանն իր ծավալով մեծ չէ, ցուցադրությունը զբաղեցնում է ընդամենը 1000 քմ մակերես): Ի հետևանք դրա՝ խստապահանջ այցելուներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխանները նրանք չեն գտնում ցուցադրության մեջ: Այցելուին հետաքրքրում է, օրինակ, թե որքա՞ն են կազմում Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև պատմական Հայաստանի մեջ չմտնող Օսմանյան Թուրքիայի այն տարածքները, որտեղ ապրում էին հայերը:

Այս հարցին կարող է պատասխանել նշանավոր հայ պատմաբան Ազատ Համբարյանի կողմից դեռևս 1965թ. բարեխղճորեն կազմված աղյուսակը, որը մենք ներկայացնում ենք ստորև:[6]

Վիլայեթները	Տարածությունը (ք.կմ.)	Բնակչությունը (երկսեռ անձ.)	Սանջակները	Կազաները
Վան	39300	379800	Վան	Վան, Կարճկան, Գավաշ, Բերկրի, Մոկս.Մահմուդիե, Շատախ, Ադիլջեվազ և Արճեշ.
			Հեքյարի	Հեքյարի, Բեիդ-ուլ-Շյուպապ, Ջուլամերկ, Գավառ, Շամդինա, Սամուրեք-ուլ-Համիդ.
Կարին	49700	645700	Կարին	Կարին,Բաբերդ,Բասեն,Քղի, Դեր-ջան, Կիսկիմ, Թորթում, Սպեր, Նամրվան և Խնոս.
			Երզնկա	Երզնկա, Կամախի, Ռիֆայիե, Ղուռուչայ և Բոլոմեր
			Բայազետ	Բայազետ, Դիադին, Կարաքիլիսե, Ալաշկերտ, Այնթաբ.
Բաղեշ	27100	398700	Բաղեշ	Բաղեշ, Խլաթ (Ախլաթ), Խիզան և Մոտկան.
			Մուշ	Մուշ, Մանազկերտ, Բուլանըխ, Վարդո և Սասուն.
			Սղերդ	Սղերդ, Էրուն, Բերվարի, Խարզան և Շիրվան.
			Գենջ	Ճապաղջուր և Խուլփ.
Սեբաստիա	83700	900000	Սեբաստիա	Ազիզիե, Սեբաստիա, Բյունեան-Համիդիե, Թոնոս, Հաֆիք, Գոչկիրի, Տիվրիկ, Տարենտե, Կյուրին և Ելդըզի
			Ամասիա	Մաբսվան, Ամասիա, Վեզիր-Քեոփրիվ, Միջիդ-յուզիվ, Լատիկ, Հավզա, Գյումյուշ-հաջի, Օսմանջիկ.
			Կարահիսար (Կարահիսար չարգ)	Սուշեհրի, Համիդիե, Կոյուլիսար, Ալվեճրե, Շապին-Կարահիսար.
			Թոքաթ կամ Եվդոկիա	Արպա, Զիլե, Թոքաթ, Նիքսար, Արաբկիր, Կապան-Մադեն, Էկին.
Խարբերդ	32900	575200	Խարբերդ	Խարբերդ և Բեթուրքե.
			Մալաթիա (Մելիտե)	Հյուսնի-Մանսուր, Մալաթիա, Պեհեսնի, Աղջա-Դաղ, Քախթե,
			Դերսիմ	Մանազկերտ, Խոզատ, Չարսանջակ, Չմշկածագմ, Ղզզլ-Քիլիսե և Օվաջրգ.
Տիգրանակերտ	37500	471500	Տիգրանակերտ	Սեվերեկ, Սիլվան, Լիճե, Տիրեք, Բեշիրի և Տիգրանակերտ.
			Մարդին	Սծբին (Նիսիպին), Ջեզիրե, Միդիադ, Ավնիե, Մարդին.
			Արղնի-Մադեն	Բալու, Ջերմուկ, Արղնի

Ըստ աղյուսակի տեղեկատվության՝ այցելուն իր համար կարող է պարզել, որ Արևմտյան Հայաստանը զբաղեցնում էր 270200 քառ.կմ: Եթե դրանից հանենք 60200 քառ. կմ պատմական Հայաստանի մեջ չմտնող առանձին տարածքներ, ապա կմնա 210000 քառ.կմ, որն ավելի ընդարձակ է քան Անդրկովկասը և մոտ յոթ անգամ մեծ, քան այժմյան Հայաստանը: Ներկայացվող աղյուսակը տվյալներ է պարունակում նաև այն մասին, որ Արևմտյան Հայաստանում մեկ քառ. կմ-ի վրա ապրում էր միջին հաշվով մոտ 15 մարդ, մինչդեռ Կ. Պոլսի նահանգում՝ 22 մարդ, Բաղդադի նահանգում՝ 3, Սիրիայում՝ 8: Աղյուսակի վերլուծության արդյունքը հուշում է, որ հայ բնակչությունն իր խտությամբ կայսրության մեջ գրավում էր միջին տեղերից մեկը: Այցելուն տեղեկատվություն է ստանում նաև այն մասին, որ Արևմտյան Հայաստանի նահանգները բաժանված էին սանջակների, սանջակները՝ կազաների, իսկ կազաները՝ նահիեների:

Հարկ է նշել, որ թանգարանային ցուցադրության մեջ վիճակագրական տվյալների օգտագործումը պահանջում է մեթոդոլոգիական հստակ սահմանումներ: Մասնավորապես՝ հարկ է նկատի ունենալ ներքոհիշյալ երկու կարևոր հանգամանք:

Առաջին. վիճակագրությունը հասարակական գործունեության ձև է, որն ուղղված է տեղեկատվություն ստանալուն, դրա մշակմանն ու վերլուծությանը:

Երկրորդ. վիճակագրությունը նաև սոցիալական գիտությունների ոլորտի մի բնագավառ է, որն ուսումնասիրում է զանգվածային որակական ու փոխկապակցված հարաբերությունների վերլուծության ընդհանուր հարցերը: Այս առումով վիճակագրական նյութն անհրաժեշտ է դիտել որպես պատմական աղբյուր, իսկ դրա վերլուծության և ուսումնասիրման մեթոդիկան՝ որպես աղբյուրագիտության առանձնահատուկ բաժին:[7]

Ներկայումս, երբ հրապարակի վրա են թուրք ուսումնասիրողների միտումնավոր խեղաթյուրումներով արված «պատմագիտական» հետազոտությունները, որոնց հիմքում ընկած են հայ բնակչության թվաքանակի մասին կեղծ ժողովրդագրական տվյալներ, անհրաժեշտություն է դառնում թանգարանային ցուցադրության մեջ ներկայացնել, բացահայտել ու վերլուծել նաև վիճակագրական այլ տվյալներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են Արեմտյան Հայաստանում բնակվող հայերի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակին:

Արևմտյան Հայաստանում բնակվող հայ բնակչության, մասնավորապես՝ գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը, ունեցվածքի պատկերը բնութագրելու համար խիստ կարևոր են հետևյալ տվյալները: Թուրքիայի տնտեսության մասին մինչ Առաջին համաշխարհային պատերազմն ունեցած ընդհանուր տվյալների համաձայն Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգներում 1909-1910թթ. յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ հետևյալ տարածությամբ հողակտոր:[8]

Սեբաստիայի վիլայեթում	2,4 հեկ. վարելահող
Խարբերդի՝	1,9 հեկ. վարելահող
Կարնո՝	1,5 հեկ. վարելահող
Վանի՝	3,3 հեկ. վարելահող
Տիգրանակերտի՝	4,0 հեկ. վարելահող
Բաղեշի՝	8,3 հեկ. վարելահող

Թռուցիկ իսկ վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին հաշվով մեկ ընտանիքին հասնում էր 3,5 հեկտար վարելահող:[9] Այդ նշանակում է, որ գյուղացիները տառապում էին սակավահողությունից:

Թանգարանային ցուցադրության մեջ անկասկած մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, աշխարհի զարգացած և զարգացող երկրներից Արևմտյան Հայաստան ներմուծվող, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանից արտահանվող ապրանքների մասին տվյալները:

Ստորև ներկայացվող աղյուսակի հպանցիկ տվյալներն իսկ՝ դեռևս 1880-ական թվականների կեսերին Կարնո, Վանի, Բաղեշի և Տրապիզոնի նահանգներում եվրոպական մի շարք պետությունների կողմից տարվող առևտրի վերաբերյալ, ավելի քան խոսուն են:[10]

Պետությունները	Արտահանումը (հազար ռուբլի)	Ներմուծումը (հազար ռուբլի)	Շրջանառության գումարը (հազար ռուբլի)	Տոկոսային հարաբերությամբ
Անգլիան	864,0	7927,1	8791,2	33,3%
Ֆրանսիան	678,1	1611,5	2289,6	8,7%
Գերմանիան	782,3	1375,0	2157,3	8,2%
Ավստրիան	120,0	756,0	876,0	3,3%
Ռուսաստանը	486,7	906,1	1392,8	5,3%
Թուրքիան և Եգիպտոսը	4.870,2	2446,7	7316,9	27,7%
Իտալիան	7,8	101,9	109,9	0,4%
Պարսկաստանը	174,7	1.957,5	2132,2	8,1%
Ռումինիան և Բուլղարիան	154,2	32,3	186,5	0,7%
Բելգիան	83,3	121,9	205,3	0,8%
Հունաստանը	93,4	33,4	126,8	0,5%
Դանիան	93,5	-	93,5	0,3%
Շվեդիան	-	160,0	160,0	0,6%
Այլ երկրներ	88,0	478,0	566,0	2,2%
Ընդամենը	8496,2	17.907,4	26403,6	100%

Վերը բերված աղյուսակների ցուցադրումը վկայում է, որ այդ նյութերի կիրառման դիապազոնը բավականին ընդարձակ է և արդյունավետ: Ավանդական ցուցադրական աշխատանքներում նման նորամուծությունը նոր հնարավորություններ է ստեղծում, հատկապես, երբ այցելուների զգալի մասն ինքնուրույն է դիտում ցուցադրությունը և առնչվում աղյուսակների, սխեմաների ու տեղեկատվական բնագրերի, վկայությունների հետ: Փաստորեն տեղեկատվական նյութերի նման ցուցադրումը թանգարանային ցուցադրության միջոցով գիտելիքների տարածման համար անսահմանափակ հնարավորություն է ընձեռում:

Թանգարանային ցուցադրության մեջ այս կարգի փաստագրական սկզբնաղբյուրների առկայությունն առավել կարևորվում է այժմ, երբ Թուրքիան փորձում է ըստ ամենայնի ժխտել 20-րդ դարասկզբի՝ Հայոց ցեղասպանության փաստը: Այս առումով միանգամայն իրավացի է պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը՝ գտնելով, որ ցեղասպանության ժխտումն արդարացիորեն համարվում է վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում վերջինիս մշակույթն ու պատմական հիշողությունը:[11] Հայերի ցեղասպանության ժխտման ամենաթարմ փորձերից մեկը

կատարեցին մի խումբ թուրք պատմաբաններ (Հիքմեթ Օզդեմիր, Քեմալ Չիչեք, Օմեր Թուրան, Ռամազան Չալըք և Յուսուֆ Հալաչօղլու), 2004 թվականին հրատարակելով «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատությունը:[12] Թուրք պատմաբանները դեռևս 19-րդ դարի կեսերից հմտացել են վիճակագրական զեղծարարություններ կատարելու գործում և, փաստորեն, անհնար է ճշմարտացի վիճակագրական տվյալների մեկնաբանումներ գտնել թուրք պատմագիտության մեջ: Ինչպես ճշմարիտ կերպով նկատել է Ա. Անանյանը, ըստ նահանգների ներկայացված վիճակագրությունը ցույց է տալիս, որ ժողովրդագրական տվյալները հավաքագրելիս և ամփոփելիս ներկայիս թուրք ժողովրդագիրները ոչ միայն լուրջ սխալներ են անում, այլև միտումնավոր ու իրարամերժ թվախաղով են զբաղվում, որի արդյունքում վիճակագրական ցուցանիշներն անբացատրելի շեղումներ են պարունակում:[13]

Արևմտահայերի ընդհանուր թվի մասին մեր ունեցած առաջին տեղեկությունները վերաբերում են 1845 թվականին, երբ Թուրքիայում սուլթան Աբդուլ-Մեջիդի հրամանով անցկացվեց պաշտոնական մարդահամար: Ոչ ստույգ տվյալներով այդ ժամանակ հայերի թիվը կազմում էր 2400000–2500000 մարդ: Ֆրանսիացի ուսումնասիրողներից Մ. Ա. Ուբիչինին դեռևս 1853թ. արձանագրում է այդ թիվը, վկայելով, որ հայ բնակչության մեծ մասը (2000000 մարդ) ապրում էր ասիական, իսկ փոքր մասը (400000 մարդ)՝ եվրոպական Թուրքիայում:[14]

1867թ. թուրքական պետական պաշտոնյա Մկրտիչ բեյ Դաղյանը ֆրանսերեն լեզվով հրատարակած իր «Օսմանյան կայսրության հայերը» խորագիրը կրող աշխատության մեջ հայերի թիվը հաշվում էր 3400000 մարդ:[15]

Թուրքական պաշտոնական վիճակագրության տվյալներն ամփոփվում էին այսպես կոչված «Սալնամեների» (տարեցույցերի) մեջ:

Դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին ըստ տարեցույցերի հայկական ներքոհիշյալ վեց նահանգներում բնակվում էր շուրջ 3600000 հայ, որոնք տեղաբաշված էին հետևյալ կերպ.[16]

Սվազի նահանգ - 900000
Էրզրումի նահանգ- 650000
Վանի նահանգ - 650000
Բիթլիսի նահանգ - 400000
Խարբերդի նահանգ - 500000
Դիարբեքիրի նահանգ - 500000

Սակայն թուրքական կառավարությունը 1878թ. Բեռլինի կոնգրեսին ներկայացնելով հայ բնակչության թվաքանակը, այն նվազեցրեց, աղավաղելով իրականությունը: Ըստ այդ տվյալների հայկական ներքոհիշյալ նահանգներում, իբր, ապրում էին 586000 հայ.[17]

Սվազի նահանգ - 106000
Էրզրումի նահանգ- 104000
Վանի նահանգ - 78000
Բիթլիսի նահանգ - 88000
Խարբերդի նահանգ - 54000
Դիարբեքիրի նահանգ - 156000

Նույն՝ Բեռլինի կոնգրեսին արևմտահայերի թվաքանակի մասին իր տեղեկությունները ներկայացրեց նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատրի-

արքարանը, որը գտնում էր, որ իրականում հայերի քանակն ավելի է. այն կազմում է մոտ երեք միլիոն:[18] Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալները բնականորեն ավելի իրազեկ էին և հետագայում դրանք հիմք ընդունվեցին տարբեր ուսումնասիրողների կողմից:[19]

Ա. Համբարյանն իր մի արժեքավոր հոդվածում լուրջ վերլուծության ենթարկելով արևմտահայերի թվաքանակի հարցը, ընդհանրացնելով ու բաղդատելով հրապարակի վրա գոյություն ունեցող փաստերը, հանգում է կարևոր եզրակացությունների:[20] Ըստ Ա. Համբարյանի՝ թուրք կառավարիչները, տարիներ շարունակ վարելով հայաջինջ քաղաքականություն, ի վերջո հասան իրենց նպատակին. արևմտահայ բնակչության թվաքանակը ռուս–թուրքական պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանում չաճեց, այլ նվազեց՝ երեք միլիոնից իջնելով երկու միլիոն հինգ հարյուր հազարի:

Դեռևս 1913թ. Փարիզում Գրիգոր Զոհրապը Մարսել Լեար կեղծանունով հրատարակած իր «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի ներքո» աշխատության մեջ, դատապարտելով սուլթանական կառավարության վիճակագրական ցուցանիշների նենգափոխման գործելակերպը, գրում է, որ Օսմանյան կայսրությունում «...այսօր տաճկահայերն իրենց ընդհանուր թիվը համարում են 2100000, որից 1018000-ը՝ բուն Տաճկահայաստանում, իսկ օսմանյան կառավարությունն այդ թիվն իջեցնում է 1100000-ի, որից 600000-ը՝ Տաճկահայաստանում: Տարբերությունը շատ մեծ է: Վիճակագրության բացակայության պայմաններում ելքը միակն է. օգտվել խնդրո առարկա հարցի վերաբերյալ առկա բոլոր տեղեկություններից, պարզելու համար, թե ո՞ր կողմն է ճշմարտությունը»:[21]

Չփորձելով ընդհանրացնել բազմաթիվ հետազոտողների՝ Օսմանյան Թուրքիայում հայ ազգաբնակչության թվաքանակի մասին գոյություն ունեցող բոլոր կարծիքները, նշենք, որ աղբյուրագիտական արժեք ներկայացնող նման ժողովրդագրական հետազոտությունները լուրջ ուսումնասիրության առիթ հանդիսացան Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական նոր ցուցադրության կազմակերպման կապակցությամբ, և այսօր թանգարանի այցելուների ու գիտական հասարակության դատին են ներկայացվում ներքոհիշյալ վիճակագրական ընդարձակ տվյալները:

Նահանգների անվանումը և հայերի բնակության վայրերը	Հայկական բնակավայրերի թիվը	Հայ բնակչության թիվը	Հայկական եկեղեցիների թիվը	Հայկական դպրոցների թիվը
Էրզրում	425	215 000	482	322
Վան	450	197 000	537	192
Դիարբեքիր	249	124 000	158	122
Խարբերդ	279	204 000	307	204
Բիթլիս	681	220 000	671	207
Սեբաստիա	241	225 000	219	204
Տրապիզոն	118	73 390	109	190
Արևմտյան Անատոլիա	237	371 800	281	300
Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	187	309 000	537	176
Եվրոպական Թուրքիա	58	194 000	67	79
Ընդամենը	2925	2 133 190	3368	1996

Ընդհանրացնենք՝ վիճակագրական տվյալները դիտելով որպես աղբյուրագիտական արժեք և դրանք միաժամանակ՝ համարելով թանգարանային գիտաժանդակ նյութ, հարկ է թանգարանագետների ուշադրությունը բևեռել այն շատ կարևոր իրողության վրա, որ թանգարանային բնօրինակ աղբյուրներ հանդիսացող արժեքներին զուգահեռ՝ թանգարանային ցուցադրության մեջ համազոր ազբյուրների ու արժեքների են վերածվում նաև թանգարանային գիտաժանդակ նյութերը:

Պետք է հրաժարվել այն մտայնությունից, թե գիտաժանդակ նյութերը ծանրաբեռնում են թանգարանյին ցուցադրությունը: Ընդհակառակը: Պատմական երևույթները ներկայացնող թանգարանային առարկաների համալրումը գիտաժանդակ նյութերով՝ թանգարանային ցուցադրությունը դարձնում է առավել ըմբռնելի ու դյուրամատչելի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Լավրենտի Բարսեղյան. Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմակերպման մի քանի հարցեր, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», գիտական աշխատություններ, Երևան, 2002, թիվ 6, էջ 3-18:

[2] Основы музееведения, ответственный редактор Шулепова Э. А., Москва, 2005, с. 72.

[3] Նույն տեղում, էջ 74-77:

[4] Лушкарева Л. Н. Классификация русских письменных источников но отечественной истории, Москва, 1975; Ковальченко И. Д. Методы исторического исследования, Москва, 1987, с. 122.

[5] «XX դարի առաջին ցեղասպանությունը (նյութեր ցուցահանդեսների կազմակերպման համար)», կազմող՝ Երանուհի Մարգարյան, Երևան, 2005:

[6] Համբարյան Ա. Ա. Ազգարային հարաբերություններն Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան,1965, էջ 38:

[7] Данилевский И. Н., Кабанов В. В., Медушевская О. М., Румянцева М. Ф. Источниковедение, Москва, 2000, сс. 582-583.

[8] Новичев А. Д. Очерки экономики Турции до Мировой Войны, М.-Л., 1937, с. 268.

[9] Համբարյան Ա. Ս., նույն տեղում, էջ 77:

[10] Грязнов Ф. Военный обзор персдового театра в Азиатской Турции, Тифлис, 1897,ч. II, с. 172.

[11] Ованнисян Р. Отрицание: Геноцид армян как прототип такого подхода, „Вестник", Армянский Институт Международного права и Политологии в Москве. 2004, № 2 , с. 49.

[12] H. Özdemir [ve baş] Ermeniler: Sürgün ve Göç, Ankara, 2004.

[13] Արամ Անանյան. Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պատմական ընկերակցության Հայելի. աքսոր և գաղթ աշխատության մասին. Երևան, 2005, էջ 26:

[14] Убичинан М. А. Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, СПБ, 1853, с. 16.

[15] Мкртич бей Дадиян. Современное армянское общество. Армяне в Оттоманской импери, Тифлис, 1878, с. 8.

[16] «Հորիզոն», 1913, № 27:

[17] Сборник географических, топографических и статических материалов по Азии, СПБ, 1895, вып. 62, сс. 28-29.

[18] Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի, Կ. Պոլիս, 1878, էջ 9-22:

[19] Аракелян А. А. Статистика армянского населения Малой Азии, „Известия Кавказского отдела Императорского русского географического общества'', Тифлис, 1914, т. 22, вып. 2, сс. 121-125.

[20] Համբարյան Ա. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 98-114:

[21] Գրիգոր Զոհրապ. Սեբաստիայի նահանգը տնտեսական ու ազգագրական տեսակետից և հայերի դրությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1991թ., № 1, էջ 115: